

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարեկանը 6 րուբլ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлиς, Редакция «Мелік».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առուօրեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).
Յայտարարութիւնն ընդունվում է ամեն ինչով.
Յայտարարութիւնների համար մէկ րուբլ. են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Նոյն Սողոմոնեան եւ Զարար Կարապետեան Արտիկանցիները ցաւով սրտի յայտնում են իրանց ազգականներին եւ ծանօթներին, առաջինը իր անմոռանալի ամուսնի, երկրորդը իր եղբոր՝

Բ Ե Ղ Գ Ի Ը Ս Ե Ր Ի

Վարդապետ մահը, որ տեղի ունեցաւ ապրիլի 21-ին Թաղումը տեղի կունենայ իր հայրենի Օձուն (Ուղուն) գիւղում. ամբողջ կը կատարվի ապրիլի 23-ին, երեկոյեան ժամը 6 1/2-ին, իսկ յաղարկաւորութիւնը կը սկսվի 24-ին, ցերեկվայ ժամը 12-ին, դէպի երկաթուղու կայարանը, իր սեփական տանից, Օրբէլեան փողոց, № 3:

2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պարսից Շահի գալուստը.—Ներքին Տեսչութիւնը Բազուի Հայոց Մարզապետական Ընկերութիւնը, Երեկվայ Իրականութիւնը, Նամակ Շուրու գաւառից, Նամակ Խմբագրութեան, Ներքին լուրեր.—ԱՐՏԱԿԻՆ ՏԵՍԽԻԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից, Արտաքին լուրեր.—ՀԵՐԱԳԻՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Համառուական անայնագործական ցուցանանքներ:

ՊԱՐՏԻՑ ԵՄԷԻ ԳՈՒՈՒՍԸ

Պարսից Մուշաֆէր Էդրին Շահը նորից Ռուսաստանումն է: Նա երկրորդ անգամն է, որ ճանապարհորդութիւն է կատարում դէպի Եւրոպա թէ՛ բժշկվելու նպատակով եւ թէ՛ այցելելու Ռուսաստանում աշխարհի զանազան տեղերը:

Պարսիկները ընտելացան իրանց թագաւորների եւրոպական ճանապարհորդութիւնները: Հետո: Երբ որ Նասրէդդին Շահը առաջին անգամ գուրս եկաւ Պարսկաստանի սահմաններից դէպի Եւրոպա, նրա այդ քայլը համարվում էր շատ համարձակ եւ վտանգաւոր: Ենթադրում էին, որ Պարսկաստանում տեղի կունենան խրտուսներ եւ անկարգութիւններ: Նոյն երկրորդ մասամբ գոյութիւն ունէր եւ երկու տարի արանից առաջ, երբ Մուշաֆէր Էդրին Շահը ճանապարհ ընկաւ դէպի Եւրոպա: Իսկ այժմ այլ եւս չէ լսվում ոչ մի երկրորդ մասին, եւ Շահի ներկայ ճանապարհորդութիւնը տեղի ունի իբրեւ մի սովորական երեւոյթ:

Դա միայն թարական է. դա մի քայլ է դէպի առաջ: Պարսիկները առհասարակ վստում են ընտելանալ եւրոպական կուլտուրային եւ փորձեր են անում իւրացնել

Եւրոպական կարգեր իրանց երկրի համար: Պարսկաստանում այժմ մեծ լճով գործում են եւրոպացի ինտորուկտորներ, որոնք ձգտում են եւրոպական կարգի մտցնել Պարսկաստանի վարչական տնտեսութեան մէջ: Այդ ինտորուկտորների նշանաւոր մասը կազմում են բելգիացիներ, որոնք յարմար են համարվել այն տեսակետից, որ նրանք հպատակներ են Բելգիայի նման մի քաղաքական-էկզոր պետութեան, ուստի եւ առիթ էն տայ միջադրային թիրախացութիւնների առաջ գալուն:

Անկասկած, ժամանակով, երբ Պարսկաստանը կունենայ կրթված պարսիկ երկտասարդների մի խոշոր բաղմութիւն, նա կարող կը լինի փոխարինել եւրոպացիներին իր սեփական հպատակներով. բայց այժմ նա մեծ պէտք ունի կողմնակի գործողների: Պարսից կառավարութիւնը արդէն ձեռնարկել է մի քանի միջոցների ստեղծելու տեղական գործողների խմբեր, նա ուղարկել է մի քանի երիտասարդներ Ռուսաստան ուսանելու եւ իր երկրում հիմնել է բարեկարգ մի երկու դպրոցներ: Ճիշտ է, մինչեւ այժմ արածը դեռ շատ քիչ է, բայց նա սկիզբն է մի ծրագրի, որ հաւանութիւն է գտել Պարսից պետութեան ներկայ պետի եւ կառավարչական բարձր շրջանի կողմից:

Պարսից Շահը մտնում է Ռուսաստան, իբրեւ բարեկամ պետութեան օգնութաւոր. ներկայացուցիչ: Եւ Ռուսաստանը, որ վերջին տարիներս աւելի եւս ամրացել է իր բարեկամութիւնը Պարսկաստանի հետ տնտեսական դաշնակցութեամբ, ընդունում է նրան սիրալիք ուղղոյններով, յոյս ունենալով որ երկու հարեան երկիրների մէջ եղած բարեկամական կապը ապագայ

ում աւելի ու աւելի պէտք է ուժեղանայ, օգուտներ բերելով փոխադարձաբար երկու պետութիւններին էլ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍԽԻԹԻՒՆ

ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

II

Ճաշարան: Բացված է Աշխատանքի Տան բնակարանում 1901 թ. ապրիլին ճաշարանում բացված է 54,318 ճաշ, միջին թիւով օրական 151 ճաշ: Ընկերութեան ճաշարանը ծախսել է 49,424 ճաշողների վրա 3668 րուբլի 3 կոպէկ, բացի դրանից ստացել է 820 ր. 44 կոպ. թափախման եւ հոգեհացների համար: Մի ճաշը նստում է ընկերութեանը 7,6 կոպէկ, բաղկացած է 1/3 ֆունտ մսից եւ 1 ֆունտ հացից, աւելացրած անհրաժեշտ համեմունքներ: Ճաշարանից օգտվել են գործի անընդունակ, հիւանդ, յետին աղքատ եւ անպաշտօն մնացած մարդիկ, թէ՛ մեծ, թէ՛ փոքր, թէ՛ կին եւ թէ՛ տղամարդ: Ինքն ըստ ինքեան հասկանալի է թէ՛ ինչ խոշոր բարիք է դա: Բազուի մէջ արդէն սովորութիւն է դառնում նուէրներ տալ ճաշարանին: Մեծերի տները փող են տալիս ճաշարանին, որ եւ հոգեհաց է տալիս աղքատներին: Գեղեցիկ սովորութիւն: Յոյս կայ, որ այդպիսով այդ համակրելի հիմնարկութիւնը հետզհետեւ աւելի եւս կընդարձակէ իր գործունէութիւնը:

Գրադարան: Սա Մարդասիրական Ընկերութեան հին հիմնարկութիւնն է եւ ներկայումս ունի հետեւեալ հարստութիւնը.

Գ Ր Զ Ե Ր

Հայերէն . . . 2454 հատոր, արժ. 2826 ր. 41 կ.
Ռուսերէն . . . 7425 » » 12375 ր. 81 կ.
Օտար լեզուներ. 49 » » 104 ր. 14 կ.

Ա Մ Ս Պ Գ Ի Ր Ն Ե Ր

Հայերէն . . . 378 հատոր, արժ. 1725 ր. 22 կ.
Ռուսերէն . . . 3204 » » 5346 ր. 70 կ.
Օտար լեզուներ. 129 » » 158 ր. 80 կ.

1901 թ. գրադարանը ունեցել է 1013 բաժանորդ. դրանցից՝ ռուս 396, հայ 368, այլազգի 249: Գրադարանից դուրս են տարված 26158 գիրք. դրանցից 21,896 ռուսերէն եւ 2262 հայերէն: Ընթերցարանում յաճախումների թիւը եղել է 29,753, որից 9581 ռուս եւ ուրիշ ազգութիւններ, 20,172 հայ: Մուտք գրադարան-ընթերցարանը ունեցել է 1680 րուբլի 87 կոպ. իսկ ծախս 2738 րուբլի 32 կոպէկ:

Մի երկու նկատողութիւն գրադարանի մասին: Վերոյիշեալ թւերը ցոյց են տալիս, թէ՛

կան ներկայացուցիչ էր պ. Փիլալեան. մասնակցում էր եւ պ. Շալալով:

Համաժողովը, ըստ ծրագրի, պէտք է բաժանված լինէր չորս ճիւղերի (սէկցիաների)—հնգհատուր, տեխնիքական, տնտեսական եւ ուսումնական, բայց անդամների ընդհանուր ժողովը որոշեց միացնել սէկցիաները երկ-երկու եւ կազմել երկու սէկցիա՝ ընդհանուր տնտեսական եւ տեխնիքական-ուսումնական: Մարտի 12-ին կայացաւ միայն ընդհանուր ժողով. 13—20-ին կայացան սէկցիաների նիստերը, իսկ 21—22-ին ընդհանուր ժողովներ, ուր վերջնական քննութեան ենթարկվեցին սէկցիաներում կայացրված որոշումները՝ ներկայացրված զանազան առաջարկութիւնների եւ զեկուցումների ու վիճաբանութիւնների հիման վրա:

Այդ զեկուցումների թիւը 40-ից աւելի էր եւ շոյալով էին հետեւեալ էական 15 կէտերը. 1) Ռուսաստանի տնտեսագործական արհեստների աչքի ընկնող նշանակութիւնը եւ նրանց զոյուրեան անհրաժեշտութիւնը գիւղատնտեսութեան եւ խոշոր գործարանական արդիւնաբերութեան հետ միասին: 2) Տնտեսագործական արհեստների այժմեան տարածումը եւ նրանց ապագայ զարգացման պայմանները: 3) Տնտեսագործ-գիւղացու կենցաղական եւ ա-

րքան աղքատ է հայերէն գրքերի բաժինը: Դա մի բնական երեւոյթ է, եթէ ի նկատի ունենանք, որ տարին հազիւ մի քանի հատ գրքեր են լոյս տեսնում մեր մէջ: Բայց եւ այդպէս, չէ կարելի ասել թէ ամբողջ հայոց գրականութիւնը բաղկացած է այն 2454 հատորներից, որոնք այժմ պահվում են Մարդասիրական Ընկերութեան գրադարանի պահարաններում. բաւական է թերթիկ գրացուցակը, եւ իսկոյն կիմացվի, թէ՛ արքան պակասութիւններ ունի հայերէն բաժինը:

Մեր կարծիքով, այդ աղքատութեան պատճառն այն է, որ գրադարանը գլխաւորապէս ընթացիկ գրականութեան վրա է ուղարկում թիւն դարձնում, այսինքն ձեռք է բերում այն, ինչ հրատարակվում է, ինչ կայ գրավաճառանոցներում: Այսպէս ներքին է այն գրադարաններին, որոնք մեծ միջոցներ չունեն, ապրում են ողորմութիւն հաւաքելով: Մինչդեռ Բազուի գրադարանը չէ կարելի աղքատ համարել. ապացոյց—մօտ 18 հազար րուբլի է ծախսվել տարիների ընթացքում ռուսերէն գրքեր ձեռք բերելու համար:

Ունենալով ռուսերէն գրքերի այդպիսի մի աչքի ընկնող հարստութիւն, գրադարանը պիտի մտածէ եւ հայերէնի բաժինը հարստացնելու մասին: Մեր կարծիքով, գրադարանի համար պատուաբեր կը լինէր հայ տղաքոյրների մի լիակատար ժողովածու կազմելը: Կովկասում չէ կարելի գտնել մի հիմնարկութիւն, որ ունենար հայերէն գրքերի մի լիակատար գրադարան: Յոյս դնել թիֆլիսի վրա անկարելի է. թիֆլիսի հայերը շատ եւ շատ պարտքեւական ճշմարտութիւններ են մոռացել եւ շարունակ մոռանում են: Բազուի գրադարանը կորող էր այդ մեծ պակասութիւնը լրացնել գոնէ մասամբ, տարիների ընթացքում կարելի է շատ հարստացնել հայերէն գրքերի բաժինը, առանց առանձնապէս ծանրաբեռնելու իր բիւջոյն: Պէտք է միայն սխտեմ ընտրել եւ տարիների ընթացքում հետեւել այդ սխտեմին: Մեզանում դժուար չէ այդպիսի մի միջոց իրագործել. մասնաւոր տներում կան փոքրիկ գրադարաններ, որոնց մէջ կարելի է գտնել շատ հազուադէպ գրքեր: Կարելի է գնել այդ գրադարանները, հաւաքել մի տեղ: Պէտք է մասնաւոր ուղարկութիւն դարձնել պարբերական հրատարակութիւններ վրա: Յիշուեալ տարի մեզանից ցատկ էլ կար այն իրողութիւնը, որ գրականութիւնը ամփոփված է պարբերական մամուլի մէջ, եւ դա ճիշտ է: Այսօր Նալբանդեանցի գրական գործունէութեան մասին ինչից կարելի է հասկացողութիւն կազմել: Դրա համար պէտք է ունենալ «Հիւսիսափայլը», իսկ «Հիւսիսափայլը»

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ՏՆԱՅՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՆԵՐ

Ցուցանագործական գործիչների I համաժողովը
Այդ համաժողովը, ինչպէս արդէն գիտենք Մշակիչ ընթերցողները, գումարվեց ցուցանանքների առիթով, Պետերբուրգում, մարտի 12-ին եւ աւարտեց իր պարագմունքները 22-ին. նա ընդհանուր հետաքրքրութիւն առաջ բերեց Ռուսաստանի ինտելիգենտ հասարակութեան մէջ, իր ջանքերով առարկայ դարձնելով ոչ միայն մասնագիտական, զուտ տեխնիքական հարցեր, այլ եւ ընդհանուր տնտեսական եւ սոցիալական նպատակութիւն ունեցող հարցեր, որոնց լուծումը Ռուսաստանի համար հերթական է դարձել: Ճիշտ է, կարելի չէր անել վճիռների կայացնել այդ տեսակ հարցերի մասին, այն պատճառով, որ նրանք դուրս էին համաժողովի որոշումներից: Ծրագրից, բայց, ինչպէս շատ հիշուող երկրագործութեան միջնաւոր ծրագրով իր ճառի մէջ, ներկայ դէպքում այդ այն-

նողջապահական պայմանների բարւոքումը: 4) Տնտեսագործական արտադրութեան տեխնիքական եղանակների կատարելագործութիւնը եւ էժանացումը: 5) Տնտեսագործներին հում նիւթ հայթայթելը էժան գնելով: 6) Տնտեսագործների մէջ կատարելագործված եւ պարզ գործիքների ու արտադրութեան միջոցների տարածումը: 7) Տնտեսագործական արտադրութեան մի քանի ճիւղերի մէջ գեղարուեստականութիւն մտցնելը: 8) Տնտեսագործական արդիւնքների տարածումը դիւրացնելը: 9) Տնտեսագործներին յարմար մանր կրեղիտ բաց անելը: 10) Համագործակցական (կօօպերատիւ) սկզբունքի գործադրութիւնը տնտեսագործների վերաբերմամբ: 11) Կատարելութեան աշակցութիւնը տնտեսագործական արհեստներին: 12) Զէմստօյների, առանձին կօփտէսների եւ դաշնակցութիւնների մասնակցութիւնը տնտեսագործներին օգնելու գործին: 13) Մասնագիտական դպրոցների եւ կրթական վարպետանոցների կազմակերպութիւնը տնտեսագործական արտադրութեան զանազան ճիւղերի համար: 14) Տնտեսագործական կենտրոնական եւ տեղական միջոցների հաստատութիւնը: 15) Տնտեսագործութեան վիճակը եւ կարիքները կայսրութեան զանազան շրջաններում եւ ծայրերում:

Ծրագրով որոշված այս սկզբնական հարցե-

ամբողջ ժողովածուն քանի մարդ, քանի գրա-
դարաններ ունենա

Մեզ կարող են ասել թէ անցած գրականու-
թիւնը, բաղկացած գլխաւորապէս գրաբար
գրութեանցից, չէ կարող ընթերցանութեան
նիւթ դառնալ, թէ նա մի փոքրիկ շրջանի հա-
մար կարող է հետաքրքրական լինել: Համա-
ձայն ենք, որ մասամբ դա ճիշտ է: Բայց գրա-
դարանների պաշտօններից մէկն էլ այն է, որ
պահպանէ գրական գործերը: չը կայ գրադա-
րան, որի բոլոր գրքերը հասարակութեան լայն
շրջանների համար լինեն: Անկասկած, այն 10 հա-
զար հատոր ունեւորէ գրքերից, որ ունի Բագուի
գրադարանը, հազիւ կէսը ընդհանուր ընթեր-
ցանութեան համար պիտանի լինի:

Ընկերութեան վարչութեան ուշադրութիւն
ենք հրաւիրում ենք այս հարցի վրա: Շատ գեղե-
ցիկ բան է, որ նա կարողանում է հացի հետ գիրք
էլ տալ իւրեւ բարեգործութիւն: Եւ որքան
ցանկալի է, որ ճաշարանից տրված բաժինների
թիւը հասնէ հարիւր հազարների, այնքան էլ
ցանկալի կը լինէր, որ հարիւրից երեք հազարի էլ
չը համոզող հատորները կրկնապատկւն: Միայն
հացով չէ ավարւում մարդը...

Վերադառնալով ընկերութեան հաշիւին, յիշենք
որ անցեալ տարվայ մուտքը եղել է 28969 ռ.,
որ ընկերութիւնը ուշադրութիւն դարձրել է եւ
աղքատների համար բժշկական-օգնութիւն կազ-
մակերպելու վրա (խորհրդակցութիւն է եղել
մի փոքրիկ հիւանդանոց բացանելու համար):
Տարեկան անդամների թիւը 111 է: Շատ քիչ է...

Շատ գեղեցիկ տպաւորութիւն է գործում
եւ այն, որ Բագուի հայ կանայք աջակցում են
ընկերութեան գործերին: Այսպէս, ճաշարանը
կառավարում է 12 տիկիներից եւ օրինաբե-
րից կազմված մասնագիտով: Նրանք հերթա-
պահութիւն են անում եւ իրանց պարտականու-
թիւնը կատարել են, ինչպէս վկայում է վարչու-
թիւնը, «բարեխղճութեամբ» Շատ ուրախալի է:

Վերջացնելով այս համառոտ հաշիւը Բագուի
Մարգարիտական Ընկերութեան հաշիւ մասին,
ամբողջ սրտից ցանկանում ենք նրան առաջա-
դիմութիւն եւ աջողութիւն:

Լ.

ԵՐԵՎԱՆԻ ԻՐԱՆԱՅԻՆ ԹԻՒՆԻՆԸ
(Նամակ Բագուից)

Գնում էի Բող-Բողա բարեկամիս մօտ: Կա-
ռապանք ճանապարհը կորցրեց եւ ստիպված
եղանք երկար պտույտներ գործել այդ չորացած
հանքերի միջով: Մի տեղ էլ ձիաները կանգ ա-
ռան, եւ, հանգիստ տալու համար նրանց, եր-
կար սպանեցինք: Եւ հնարաւորութիւն ունե-
ցալ լաւ դիտել աւերակների ահագին քանա-
կութեամբ կտորներ՝ արդիւնք երեկվայ ան-
գուշ իրականութեան:

Ինչպէս ստոր, մահաբեր հոտ էր փչում այդ
սպիտակ մնացած, չորացած, քամուց եւ արե-
գակից ծոված տախտակներից: Գերեզմանային
մի սպանող, վհատեցնող սարսուռ էին ազդում
մարդու վրա անբնական, ամայի բնակարանները
իրանց կոտորածով եւ փոշով ծածկված ապա-
կիններով ու դռներով: Կենքեր թելը ընդհատ-
վել, նրա ծայրը չքացել էր սգի այդ դամբա-
րանից: Չէր լսվում գործըն խոսք, սթափե-
ցնող սուրբ, չէին լսվում շոգեկաթմանների զար-
գանալ ազդող գոռում-գոռումները:

րից դուրս համաժողովը ստիպված տեսաւ ի-
րան քննութեան ենթարկել եւ ընդհանուր
տնտեսական ու սոցիալական բնաւորութիւն
կրող հարցեր, որոնց լուծումից գլխաւորապէս
կախված է տնայնագործութեան զարգացումը
եւ առաջադիմութիւնը, ինչպէս սկզբնական
կրթութեան պարտադիր լինելու, մարմնական
պատիժներից զրկւածներից միջից վերացնելու,
գիւղացիների իրաւունքները միւս դասակարգի
հետ հաւասարեցնելու, տեղական լեզուներով
ձեռնարկներ հրատարակելու, զէնքաւորին հաս-
տատութիւնները ոչ-զէնքաւորին նահանգների
մէջ մտցնելու եւ այլ նորանման հարցեր, ո-
րոնք ուղղված էին դէպի մի ընդհանուր նպա-
տակակէտ—որքան կարելի է լայն զարգացնել
տեղական ինքնապարտն ունեւորութիւնը:

Բանալով համաժողովը, մինչստոր Երմոլով
հետեւեալ խօսքերն ուղղեց անդամներին. «Բա-
նալով տնայնագործական գործիչների ներկայ
համաժողովը, ես պէտք է ողջունեմ նրան, որ
առաջին նախաձեռնութիւնը ցոյց տուեց մեր
համալուսական արդիւնաբերութեան ի նպաստ
կարծում եմ, որ նրա աշխատութիւններն էլ
առանձնապէս բեղմնաւոր կը լինեն թէ նրան
ցոյց տուած ընդհանուր համակրութեան եւ
թէ նորարաց առաջին ցուցահանդէսի պատճա-

Աւերակների գոնէ նկարներ շատերը տեսած
կը լինեն. մարդ կրծքի մի առանձին ճշումով,
հոգեկան մի տարօրինակ թելադրութեամբ դի-
տում է այդ անշունչ աւերակները, մտքով հե-
ռանում է ներկայից եւ պատկերացնում է իր
մէջ այդ աւերակների դարաւոր պատմութիւնը:
Դարերի պատմութիւն. այդտեղ կան ժողո-
վուրդների աստիճանաբար քաղաքակրթութեան
օրինակներ, խաւարի եւ լոյսի կուրի տեսարան-
ներ, բունակալ աշխարհակարգի անօրինակելի
անգլխութիւններ. այդտեղ մարդ տեսնում է
անարդարութեան տակ տանջվող ժողովուրդ-
ների արեւն-արցունքով շաղկապած դաշտեր ու
վայրեր, վերջապէս երբեմն յոյսի եւ արդարու-
թեան հատ ու կտոր ծիւրի, որոնք վերջի վեր-
ջոյ համարձակվում են բողբոջ տիկող սեւ ի-
րականութեան դէմ, անհասարկ կուրի են
բռնվում արդար դատը պաշտպանելու համար
եւ հեղինակ են դառնում ձեր առջեւ դրած
աւերակների: Ահա մօտաւորապէս այդ տպա-
ւորութիւնն են թողնում մարդու վրա պատ-
մական աւերակների յիշողութիւնները:

Այլ է այսօրվայ աւերակների պատմութիւնը:
Դարեր չունի նա իր ետեւում. երկու տարվայ
դործ է դա միայն. դրա պատմութիւնը սկսվում
է վերջանում է միմիայն երկու տարում: Յի-
շում եմ այն իրարանցումը, որը տիրում էր
այդտեղ երկու տարի ասպի: Ամայի անապատի
մի խոշոր մասը կարծես յարութիւն էր առել:
Կենքը ետում էր: Սայլերի եւ կաղերի ան-
վերջ շարաններ, արեւատաւորների եւ մշակի-
նի հարեւրաւոր խմբեր այստեղ եւ այնտեղ
աշխատում էին անդադրում գիշեր եւ ցերեկ:
Ոսկին հոտում էր ջրի նման. մարդիկ մոռացել
էին ամեն ինչ: Մէկը միւսից աշխատող ձեռք
խելու համար, մէկը միւսից աւելի շուտ ապ-
րանք ստանալու համար ինչ միջոցների առէր
չէին դիմում: Տենդային իրարանցման համար
հասել էր եւ հեռու դաւաճների խրքերը: Կ-
մեն օր երկաթուղին եւ շողանաւները Բագու
էին հասնում ահագին քանակութեամբ աշխա-
տող ձեռքեր, որոնք անմիջապէս կլանում էր
տնիքի բնոված Բող-Բողան: Մտքով տեղափոխ-
վեցի Բագու. այդ հանքերի տէրերը նոյնպէս
բռնված կրակոտ սպեկուլյացիայի վառ յոյսե-
րով, նմանվում էին մի տեսակ հոգեկան հի-
ւանդների, որոնք ոչինչ ուզել չէին կամենում,
բացի ոսկու ֆոնտանների անվերջ շարքերից:
Նրանք օրը մի քանի ընկերութիւններ էին թը-
խում, օրը մի քանի տնտեսական միամիտների եւ
գիւրահաստների գրպաններ էին դատարկում
յօգուտ այդ ընկերութիւնների, նրանք ապագայ
աջողութիւնների համար այդ նոր թխած ընկե-
րութիւնների հաշիւն չամպայնի չէին էին դա-
տարկում...

Երկու տարի միայն... Այսօրվայ իրականու-
թիւնը ուրիշ բան է ասում. Բող-Բողայում
կենքը եւ լեզու առած անապատը գերեզմանի
է փոխվել. իսկ Բագու, այդ անապատի հօր
հրամանատարների օրը—բանտ, փախուստ, սը-
նանկութիւններ, հողաբարձուների եւ խնամա-
կանների հսկողութեան տակ մտնել, տուն-տեղ
դրաւ դնել եւ այլն...

Երբ մարդ մտածում է, որ այդ բոլոր
տնաւորութիւնները արդիւնք էին միմիայն
անաւթի ազանութեան, անպատուարել կապ-
կութեան, առիւթական ըրի տգիտութեան եւ
նենք նախանձի,—այն ժամանակ աւելի ծանր է
նույ: Այդ ցուցահանդէսի աջողութիւնը ան-
կասկած է. տնայնագործական արդիւնաբերու-
թիւնը, մեծագործ իր ամբողջութեան մէջ, պա-
րունակում է կենսունակութեան ու ապագայ
զարգացման սաղմերը: Տիրապետում է այնպիսի
կարծիք, թէ տնայնագործական արդիւնաբերու-
թեանը վիճակված է անհետանալ, որովհետեւ
կարծիքը մեր հայրենիքի համար ճիշտ չէ: Այդ
ցոյց է տալիս մանաւանդ տնայնագործական
ցուցահանդէսը, ուր մենք համոզվում ենք, որ
տնայնագործական արդիւնաբերութեան առա-
ւելութիւնը կայանում է նրանում, որ մարդ
գնում է նրա մէջ աւելի հողի, իսկ գործարա-
նի մէջ գործում է մեծածախ անգնեսնա:

Նախաբան Սեմէնովի արտասանած ճառից ա-
ռաջ ենք բերում հետեւեալ կտորը. «Բաւա-
ստն տարուց աւելի անցաւ այն օրից, երբ
1861 թ. փետրվար 19-ի Բարձրագոյն մանի-
ֆեստի խօսքերի համաձայն ուսու ժողովուրդը
կոչեց Առաւելու օրհնութիւնը իր սեփական
աշխատութեան վրա. մենք մտանք նոր XX
դարը, եւ հասել է ժամանակը հաշիւ տալու:
Թէ ինչ է տուել այդ աշխատութիւնը թա-
նագին հայրենիքին: Քիչ չեն այնպիսի յարգելի
հասարակական եւ պետական գործիչներ, որոնք

երեւում մարդու համար իրողութիւնը: Ո՞վ
լուրջ հետազոտութեան ենթարկեց այդ տեղը,
ո՞վ բարեհաճեց մի ուրիշի հետ էլ խորհրդակցել
եւ ապա գործ սկսել. ո՞վ մի քիչ զսպեց իր
գայլի անործակը եւ ազանութիւնը ու փորձի
համար գոնէ մի վիշկա դրեց սկզբում,—ոչ ոք:
Եւ հետեւանք եղաւ թէ իրանց եւ թէ մանա-
ւանդ դատը քրտինքով կօպէկներ տնտեսած
շատ աշխատաւորների կատարեալ քայքայումը,
կորուստը:

Ահա այդ աւերակների պատմութիւնը, ահա
երեկվայ իրականութեան բեկորները...

Ռ. Յովհաննիսեան

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒ ԳԱԽԱՌԻՑ

Հերհեր գիւղ, ապրիլի 17-ին
Ապրիլի 3-ին սաստիկ ձիւն եկաւ, որ տեւեց
մինչեւ 5-ը: Տարվայ այս ժամանակին եւ այս-
պիսի սաստիկ ձիւն հազուադէպ էր այս կող-
մերում:

Արտոնք կանաչել էին եւ բաւական երկարել:
Խոտը նոյնպէս կարողանում էր կշտացնել ա-
նասուններին: Գիւղացիք ուրախ էին, որ կարո-
ղացել էին իրանց անասուններին ձմեռվայ ճան-
կերից ազատել: Սակայն ձիւնի այդպիսի անա-
կնկալ կերպով եւ ահագին քանակութեամբ
գալը յուսահատեցրեց թէ մեր եւ թէ չըջկալ
գիւղացիներին: Ապուրի սող էր: Խոտ, դարման
վաղուց էին սպառվել: Անասունները օրերով
սոված էին մնում գոմերի մէջ: Տէրը իւրա-
քանչիւր անգամ իր «տաւար» բառաչը լսելով
արտասովում էր, լաց էր լինում: Գիւղում չը
կայ, հարեւանի մօտ չը կայ: Եթէ կան գիւղի մէջ
մի-երկու մարդ, որ ապուռ ունեն, նրանք էլ
բոլորովին չեն ծախում, կամ եթէ ծախում են
չափազանց թանգ գինով (պուրը 80 կօպ.), այն-
պէս որ աղքատ մարդկանց բոլորովին ձեռնտու
չէ: Աղքատը ստիպված է իր տնային իրեղէն-
ներից ծախել եւ ապուռ առնել. բայց ինչ
ծախի:

Գիւղացին իր մասին չէ մտածում, նա սո-
վոր է միշտ երկնքից ողորմութիւն հայցել: Այդու,
առատ օրերում անհոգ, անպաւ նստում է եւ
չէ մտածում, որ պիտի հանդիպեն եւ ծախորդ
օրեր... Ամառը, կարծես իր գեղեցկութեամբ,
իր առատութեամբ չլինեցում ու չլացնում է
գիւղացու աչքը, որ նա չէ կարողանում այդ
առատութեան օրերին իր համար այնքան հաց
եւ անասունների դարման հաւաքել, որպէս զի
ձմեռվայ անտանելի օրերին, ստիպված չը լինի
ապուռի փոխարէն անասուններին աղի—արտա-
սունը ցոյց տալ: Յաւալի է: Ձիւնը ահագին
վնաս հասցրեց թէ պտղաբեր ծառերին եւ թէ
խաղողի որթերին (վերջինիս ողկոյցները բոլոր-
ովին փչացել են): Կանաչները համառատաբար
աւելի լաւ են անցնել տարիներից, եթէ պա-
տահարներից ազատ մնան արտերը, գիւղացին
կը սրբի իր աչքերի արտասունքը եւ հանգիստ
սրտով կը վայելէ իր քրտինքի արդիւնքը:

Ս. Ջալեան

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, ապրիլի 22-ին
«Մշակ» 82-րդ համարում «Կարոց թէ
Բանտ» վերնագրի տակ յօդուածում, պ. Սեր-
մաքանը տալիս է Շուշու ընդհանուր դպրոցի

այժմ էլ կասկած են յայտնում ժողովրդական
աշխատութեան ճիւղի—տնայնագործութեան
կայունութեան մասին. նրանց կարծիքով, տը-
նայնագործութիւնը դատապարտված է կորստի,
գործարանական արդիւնաբերութեան հետ ու-
նեցած կուր մէջ: Տարակոյս չը կայ, որ այժ-
մեան տնայնագործական ցուցահանդէսը եւ
այսօր բացված համաժողովը բաւական լայն կը
սփռեն այդ խնդրի վրա եւ գուցէ կը փարա-
տեն եղած կասկածները. բայց նոյն իսկ այժմ
անհնելով ցուցահանդէսը, նկատելով տնայնա-
գործութեան զարմանալի զարգացումը աշխա-
տութեան ազատութիւնից յետոյ, գիտաւ չէ
նախատեսել, որ XX դարում եւս տնայնագործա-
կան աշխատութիւնը չի կորցնի իր նշանակու-
թիւնը: Չը խօսելով արդէն այն մասին, որ նոյն
իսկ արեւմտեան Եւրոպայում ձեռագործը կամ
ձեռքի աշխատութիւնը իր շատ ճիւղերի մէջ գոր-
ծարանական արդիւնաբերութեան մրցութիւնից
դուրս կը մնայ յատկապէս այն պատճառով, որ
նա աւելի լայն ծաւալ է տալիս ժողովրդական
անհատականութեան եւ մանաւանդ նրա գե-
ղարուեստական ստեղծագործութեան, պէտք է
ամենք, որ տնայնագործական արդիւնաբերու-
թիւնը գտնվում է Ռուսաստանում բացառիկ
եւ աւելի նպաստաւոր պայմանների մէջ. Ռու-

չինութեան համառոտ պատմութիւնը, նկարա-
գրում է նրա նիւթական աննայանձնելի վիճա-
կը, պատմում է դպրոցի վերածնութեան ձեռք
զարկողների գործունէութիւնը, գովում է նը-
րանց եռանդը եւ այլն եւ այլն:

Ամբողջ յօդուածը կարդալով, գալիս եմ այն
եզրակացութեան, որ եթէ այսօր Շուշու ընդ-
հանուր դպրոցը չունի իր սեփական շինութիւ-
նը մեղաւորը ես եմ. իսկ իմ մեղքս նրա
նույն է, որ ես ամբողջովին ինձ վրա եմ ա-
ռել դպրոցի կառուցման ծախքը:

Ինձ համար կարծեմ շատ էլ հաճելի չէ այդ-
պիսի մի մեղադրանք վերցնել, ուստի պարզ
եմ համարում համառոտ կերպով պատմել անդ-
քը, որից յետոյ կարծեմ ամեն մի ընթերցող
կարող է «Սողոմոնի» դեր կատարել:

Շուշու ընդհանուր դպրոցի համար պ. ի.
Անտոնեանը կառավարութիւնից թոյլտուութիւն
ստանալով, սկսում է հանգանակութիւն: Որ-
քան յիշում եմ, երբ հանգանակութեան թիւթը
ինձ առաջարկեցին, նուրբատուութիւնների գու-
մարը 10,000-ից աւել չէր անցնում: Երբ պ.
Անտոնեանից տեղեկացայ, որ դպրոցի շինու-
թեան համար հարկաւոր է 90,000 ռուբլի, ես
պատրաստակամութիւն յայտնեցի, որ յիշալ
գումարը ես վերցնեմ եւ ինձ վրա, իսկ ինչ
վերաբերում է մասնաւոր անհատներին նուրբա-
տուութիւններին, նրանց կարող են գործ ածել
այլ եւ այլ բարեգործական նպատակների հա-
մար:

Ամեն մի անհատ, մի որեւէ բարեգործու-
թիւն կատարելիս, առաջնորդվում է որոշ հա-
մոզմունքներով, այնպէս որ ընդունվելով 90,000
ռուբլի դպրոցի շինութեան համար ամբողջ
ծախքը, ես առաջարկել եմ, որ ոչ մի գէպտով
դպրոցի շինութեան համար մասնաւոր անհա-
նեից նպատակներ չհրաւիրվի: Այդ պայման
ընդունվում է: Նոյն-իսկ այդ ժամանակամիջի-
ցում Շուշու յանձնագործով անդամներից մէկը
ինձ առում է, թէ իրանք իրանց վրա պիտի
առնեն շինութեան գործը, առանց կապալա-
ուռի, որով գործը կարող են վերջացնել
80,000-ով, իսկ 10,000 պահել դպրոցի համար:

Անցնում է մի երկու ամիս. ինձ խնդրում
են աւելացնել 10,000 ռուբլի. ես առանց ալ
եւ աշխատեան ընդունում եմ: Անցնում է էլ
քիչ ժամանակ. ինձ կրկին դիմում են աւելո-
ցնել 10,000 ռուբլի. ես դարձեալ ընդունում
եմ, բայց այս անգամ ես կրկնում եմ իմ ա-
ռաջին պայման, որ դպրոցի շինութեան հա-
մար ուրիշ նպատակներ չը պիտի ընդունվեն, եւ
աւելացնում եմ երկրորդ պայման, որ յիշալ
չէնքի համար պէտք է ծախվի ոչ աւել քան
110,000 ռուբլի: Իմ երկրորդ պայմանն էլ
կարծեմ հասկանալի է, քանի որ 90,000-ը մի
երկու երեք ամիսում դառնում է 110,000—ա-
րող է եւ անմիջիւրբ բարձրանալ, այնպէս որ հա-
կաւոր էր մի սահման դնել:

Կարոցի շինութեան համար նախապատրաս-
տութիւնները վերապահված էին շուշուներից,
բայց նրանք բաւական ժամանակ լուռ էին:
Գործը արագացնելու համար՝ ես նախաձեռն
մեծ եմ շուշուներից եւ հրաւիրում շուտա-
փոյթ գործունէութեան: Տեղեկալ լինելով իմ
համառադարացիների անտարբերութեան, ես իմ
նամակում աւելացնում եմ, որ եթէ երեք
ամսվայ ընթացքում չը վերջացնեն գործը (յա-
տակազոր վերաբերմամբ ձեռակահնութիւններ
կապալաւորներ հրաւիրել եւ այլն) շինութիւնը
սկսելու համար, ես ստիպված կը լինեմ իմ
նուիրած գումարով մի ուրիշ քաղաքում մի
որեւէ դպրոց շինել տալ:

Անցնում են 4—5 ամիս, վերջապէս գործը
գլուխ է գալիս: Ներկայանում են երկու կա-
պալաուռ. գրանցից մէկը յատկապէս մէջ փո-
փոխութիւն էր մտցնում եւ ոչ մի ապահովու-
թիւն չէր տալիս, երկրորդը՝ Ա. Մղախ-Ար-
պեանը ընդունում է իր վրա առանց փոփոխու-
թեան եւ ներկայացնում է երկու անհատ, ո-
րոնք ապահովութիւն էին տալիս Արպեանի

սաստանդի բնակիչներից աւելի քան 80) տոկոսը
պարապլում է երկրագործութեամբ, եւ որով
հետեւ երկրագործական զբաղմունքը տարվա
մէջ միայն 5 ամիս է տեղի ունենում կրկնա-
ական պայմանների պատճառով, ուստի 6—7
ամիս ազատ ժամանակ է մնում է անապա-
գործական զբաղմունքների համար:

Տնայնագործական զբաղմունքը 6—7 ամիս
պարապ մնացող ուսու գիւղացուն կարող է
մեծ օգնութիւն հայթայթել, ազատելով նրան
կարիքից, եթէ միայն տնայնագործութիւնը լաւ
վիճակի մէջ գրվի: Նրա արդիւնքով գիւղացին
կարող է հոգալ իր շատ պէտքերը, փոքր ի
շատէ բարեկեցիկ վիճակ ստեղծել իր համա-
րաց այդ նպատակները հանելու համար, այ-
սինքն տնայնագործութիւնը այնպիսի միջոց
մէջ դնելու համար, որ նա կարողանայ հարա-
տացնել գիւղացուն, պէտք է ամենից առաջ
բարեփոխել ընդհանուր պայմանները, ստեղծել
նպատակաւոր միջոցներ: Ահա այդ պայ-
մաններ են միջոցների քննութիւնը զբաղե-
ցնում էր ընդհանուրապէս համաժողովի անդա-
մների եւ նրանց առիթով ծագեցին շատ տաք
ու երբեմն սուր վիճաբանութիւններ:

(Կը շարունակվի)

тельственный Восток»-ում տպագրված է բարձրագույն իշխանի հետադիմոր պաշտոնական բարձրագույն ընկերությունը:

ՍՕՖԻԱ Գվարդիական օֆիցերի կատարած ձին ուստի գործեց այն կառույցի վրայով, որով իշխանը գնում էր պատգամաբերների ժողովրդի իշխանը անվանա մնաց:

ԱՄՍՏԵՐԴԱՄ. Թագուհուն երեկ արված օպերային բարձրագույն երգուհի ընտանիքի մեջ փոխանց ալլ եւս չը կայ:

100 ԱՄՐՈՑ. Թագուհուն զրույթները մինչև այժմ բաւարար է:

ԲԵՐԼԻՆ. Հարաւային Աֆրիկայից եկած գեներալ Բոտայի մի բարեկամը յայտնում է, թէ սուտ են լուրերը պատերազմի զրույթների մասին եւ բռնիքների հրամանատարների հաշտութեան վերաբերմամբ բռնած զիջելի մասին: Բռնիքները իրանց չեն համարում յաղթված:

ՍՈՒԽՈՒՄ. Գաղաքային խորհուրդը որոշեց միջնորդել Սուխումում մի միջնակարգ դպրոց բանալու համար:

ԱՍՏԱՐԱ. Շահին ներկայացաւ պարսկական Աստարայում մեր բժշկական դիտող կայարանի կառավարիչ բժիշկ Շեմետովսկի: Շահը չնորհակալ եղաւ բժշկից նրա օգտակար գործունէութեան համար: Առաւօտեան 11 ժամին տեղի ունեցաւ Շահի հանդիսարար մուտքը ուսական Աստարա թնդամթածութեամբ եւ զինուորական երաժշտութեամբ:

ԼՕՆԴՈՆ. Պատգամաբերների ժողովը Այն հարցին, թէ արդեօք Անգլիան վարձում է բանակցութիւններ իտալիայի հետ Տրիպոլիսի գրաւման առիթով կրանորոն բացասական պատասխան տուեց:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴԵՐ ԲԱՆԱԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱՓՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԿԵՐԱԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշուով, փակագումար թիֆլիսի հաշուով)

Արագ գնացք Թիֆլիսից—Բաղու շաբաթը մէկ անգամ հինգշաբթի օրերը դուրս է գալիս ցերեկվայ 2 ժամ 32 րոպ. (3 ժ. 30 ր.), հասնում է Բաղու գիշերվայ 3 ժամ 58 ր. (4 ժ. 56 րոպէին):

Արագ գնացք Բաղուից—Թիֆլիս դուրս է գալիս չորեքշաբթի օրերը երեկոյան 10 ժ. 41 ր. (11 ժ. 39 ր.) հասնում է Թիֆլիս ցերեկվայ 12 ժ. 47 ր. (1 ժ. 45 ր.):

Պատասար գնացք Բաղուից դուրս է գալիս գիշերվայ 12 ժ. 2 ր. (1 ժամին), հասնում է Թիֆլիս երեկոյան 6 ժ. 24 ր. (7 ժ. 22 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյան 7 ժ. 54 ր. (8 ժ. 52 ր.), հասնում է Բաթում առաւօտեան 8 ժ. 33 ր. (9 ժամ 31 րոպէին):

Մարդատար գնացք Բաղուից դուրս է գալիս ցերեկվայ 3 ժ. 35 ր. (4 ժ. 33 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 8 ժ. 50 ր. (9 ժ. 48 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից առաւօտեան 9 ժ. 30 ր. (10 ժ. 28 ր.), հասնում է Բաթում երեկոյան 9 ժ. 23 ր. (11 ժ. 26 ր.):

Պատասար գնացք Բաթումից դուրս է գալիս երեկոյան 10 ժ. 10 ր. (11 ժ. 8 ր.), հասնում է Թիֆլիս արաւօտեան 10 ժ. 45 ր. (11 ժ. 43 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից ցերեկվայ 11 ժ. 47 ր. (12 ժ. 45 ր.), հասնում է Բաղու առաւօտեան 6 ժ. 33 ր. (7 ժ. 31 ր.):

Մարդատար գնացք Բաթումից դուրս է գալիս առաւօտեան 8 ժ. 58 ր. (9 ժ. 56 ր.), հասնում է Թիֆլիս երեկոյան 8 ժ. 33 ր. (9 ժ. 31 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյան 9 ժ. 36 ր. (10 ժ. 34 ր.), հասնում է Բաղու ցերեկվայ 2 ժ. 12 ր. (3 ժ. 10 ր.):

Պատասար գնացք դուրս է գալիս Թիֆլիսից զէպի Կարս երեկոյան 10 ժ. (10 ժ. 58 ր.), հասնում է Ղարաբաղի իսա առաւօտեան 5 ժ. 4 ր. (6 ժ. 2 ր.), Ալէքսանդրօպօլ 8 ժ. 37 ր. (9 ժ. 35 ր.), Կարս ցերեկվայ 12 ժ. 23 ր. (1 ժ. 12 ր.):

Պատասար գնացք Կարսից դուրս է գալիս ցերեկվայ 4 ժ. 12 ր. (5 ժ. 10 ր.), հասնում է Ալէքսանդրօպօլ 7 ժ. 40 ր. (8 ժ. 38 ր.), Ղարաբաղի իսա գիշերվայ 11 ժ. 6 ր. (12 ժ. 4 ր.), Թիֆլիս առաւօտեան 6 ժ. 47 ր. (7 ժ. 45 ր.):

Խառն գնացք Թիֆլիսից դուրս է գալիս ցերեկվայ 12 ժ. 30 ր. (1 ժ. 28 ր.), հասնում է Սանահին ցերեկվայ 5 ժ. 12 ր. (6 ժ. 10 ր.) և Ղարաբաղի իսա երեկոյան 7 ժ. 19 ր. (8 ժ. 17 ր.):

Խառն գնացք Ղարաբաղի իսայից դուրս է գալիս առաւօտեան 11 ժ. 45 ր. (12 ժ. 43 ր.), հասնում է Սանահին ցերեկվայ 1 ժ. 30 ր. (2 ժ. 28 ր.) և Թիֆլիս երեկոյան 6 ժ. 8 ր. (7 ժ. 6 րոպէին):

ԲՈՒԺԱՍՏԵՆԵԱԿ

ԴՕԿՏՈՐ Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ

Նորագոյն ապարանքով եւ էլեկտրական մեքենաներով. մասնաւորապէս
ԲՅՈՒ, ԳՅՈՒ, ԱՅԱՆՁԻ ԵՒ ԿՐԾՔԻ ՀԻՒՄՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Сергиевская ул., д. 12.

ՆԵՐՍԷՍ ԽԱՉԱՏՐԵԱՆ, որ Կ. Պոլսի 25 տարի պարտիզանութիւնը բրած է՝ ամենաերեւելէ տուններու եւ խաղէկներու, ամենաբնորոշ ծաղիկի, վարդի, կամելիոյի, անանախի եւ ձմերուան համար ծաղիկ եւ երեւելի պտուղներ կը հասուցնէ եւ ասանցմէ զատ լաւ բան ճարեղէնի ալ վարպետութիւնը ունի: Եթէ որ երաշխաւորութիւն ուզելու լինին, ունի մի քանի յայտնի խանութպան անձինք նրան երաշխաւորելու:

Հասցէն՝ Սօրգատակի բազար, վանեցի Մարտի տրակտորը: 1—3



ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔԱՐՏՈՒ
Հինգշաբթի, ապրիլի 25-ին
կը կայանայ

Արեւմտեանի բեմեֆիսը

բարեհաճ մասնակցութեամբ տիկ. Ի. Սպէնդիարեանի, որը կը կատարէ իշխանուհի Էլի-Նօրիայի գերը

Գ Ա Լ Ի Լ Ա

Իրաւա 3 գործ. եւ 5 պատկերով, հեղ. Օ. Ֆէյլէյի, թարգ. Ա. Յովհաննիսեանի.
Մասնակցում են տիկ. Զարէկ, Մատիսեան, օր. Դանդուբեան (Երկրորդ դէրէւտ), Արփիսիկ, պ.պ. Միրզաբեան, Միրզաբեան, Երիցեան եւ Աղեան

LA GRÈVE DES FORGERONS

Մօնթօլ Զ. Կօպպէի, որ կարդալու է ֆրանսերէն լեզուով պ. Արմէնեան:
Սկիզբն է 8 ժամին:

Ն. Ս. Ոչ ոքին տոմարի չի ուղարկելու ծանկացողները իրանք պէտք է դիմեն Արտիստական ընկերութեան թատրոնի կասանա: 3—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՐՎԱՐԱՆ

Ուրբաթ, ապրիլի 26-ին, նշանակված է անդամների ընդհանուր ժողով՝ թեկնածուներին ընտելեկելու համար, նոյնպէս եւ 1901 թւականի հաշիւը եւ 1902 թւականի նախահաշիւը քննելու եւ հաստատելու համար:

2—3

Հոյս տեսաւ
ԲԺ. Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ
ԲԺՇԿԻ ԶՐԱՅՑՆԵՐԻ ՆՅ
ՎԱՐԱԿԻԶ ՀԻՒՄՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՆԸ-ՐԱՆՑ ԹՈՅՆԸ
23 նկարներով
Գինն է 15 ԿՊ.

Մամուլի տալիս է՝ (Թորթալու) կամ (Բարա-կապուս):

Ծախվում է «Կենտրոնական» եւ «Գրուտները» գրաթիւնատարներում եւ հեղինակի մօտ: (Тифлис, Д—ру Арпуни. 8—10)

ՇՈՒՇԻ

Ատամնարոյժ Շ. Բ. Արցնի

ձյուական առանձնաւորական կարիքնաւ
Ընդունելութիւնը առաւօտեան ժամը 10-ից
մինչև 2-ը եւ երեկոյան 4-ից մինչև 7-ը:
2—8

ԳՆՈՒՄ ԵՄ

պօստային մարկաներ (բանեցող) Պարսկաստանի եւ Տաճկաստանի Դիմիլ Բակու, Միրզա-Աვაքով, Михайловская, 8, Կամ Васои, Mirza-Awakoff, rue Mikailowski, 8, 8—10

ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԵՒ ՈՒՐԻՇ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ԿՈՎ

ԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Հիմնադիրները, համաձայն Ընկերութեան Կանոնադրութեան 7 եւ 28 պարագրաֆներ, հրաւիրում են Ընկերութեան անդամ գրվել ցանկացողներին, նոյնպէս եւ ընկերութեան նպատակներին համակրող եւ նրա մէջ մասնակցելու բոլոր ցանկացողներին, զայ Ընդհանուր ժողովը ԱՐՏԻՍՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԲՆԱԿԱՆ Մէջ, ներկայ ապրիլի 27-ին, երեկոյան 8 ժամին:

Ուրիշը պակցութեան առարկաները—
1) Ընկերութեան ինն անդամներ եւ վեց կանգիդատների ընտրութիւնը եւ
2) վերաստուգող Յանձնաժողովի հինգ անդամների եւ նրանց երկու կանգիդատների ընտրութիւնը:

1—3

Թիֆլիսի Նաւարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը

Սրանով պատիւ ունի հրաւիրելու պ.պ. բաժնետէրերին ՏԱՐԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ, որը կայանալու է ներկայ 1902 թւի ապրիլի 28-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 10-ին, քաղաքային խորհրդի դահլիճում:

- Պարապմունքի առարկաներն են՝
1) Վարչութեան զեկուցումը անցեալ 1901 թւի ընկերութեան գործունէութեան մասին
2) վերաստուգող յանձնաժողովի զեկուցումը
3) Անցեալ 1901 թւի հաշիւ ու հաշիւկոյի ընտրութիւնն ու վաւերացումը. ելեւտից նախահաշիւ. նոյնպէս ընկերութեան գործունէութեան ծրագրի քննութիւնը 1902 թւի համար
4) Վարչութեան հրահանգի վաւերացումը (§ 28).
5) Ընկերութիւնը ակցիոներական դարձնելու հարցը եւ վերջինիս կանոնադրութեան հաստատութիւնը (§ 27).
6) Վարչութեան զեկուցումը վճարները իր ժամանակին չը վճարած բաժնետոմսերի մասին
7) Վարչութեան զեկուցումը նոր հոգեր (պետական կամ մասնաւոր) կապալով վերցնելու մասին, թէ նախ յարգինաբերութեան եւ թէ արտաքին շերտի շահագործութեան նպատակով, նոյնպէս եւ իր ունեցած հողերը ամբողջովին կամ մասամբ կապալով տալու կամ վաճառելու մասին
8) Վարչութեան մի անդամի (§ 9), վերաստուգող յանձնաժողովի երեք անդամների եւ երեք փոխանդամների ընտրութիւնը (§ 21).
- Անցեալ 1901 թւի տպագրված հաշիւը պ.պ. բաժնետէրերը կարող են ստանալ ընկերութեան գրասենեակում ապրիլի 23-ից:
(19, 24) 2—3

ԹԻՖԼԻՍԻ ԸՄԵԽԻՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ

Դանիում է ֆինանսների միջնորդութեան իրաւասութեան տակ Ուսումնարանը հիմնված է Թիֆլիսի վաճառականական դասակարգից. դասընթացը եռամեայ է: Առաջին դասարանը ընդունվում են առանց քննութեան քաղաքային ուսումնարաններում աւարտած աշակերտները (1872 թւի կանոնադրութեան համաձայն). Ուսման վարձը տարեկան 80 րուբլի է:

Դասընթացը աւարտողների իրաւունքները.—անձնական պատւաւոր քաղաքացու կոչումն հինգ տարի առեւտրական հիմնարկութիւնների մէջ ծառայելուց յետոյ: Պետական ծառայութեան մէջ՝ քաղաքացիական առաջին աստիճան ստանալու իրաւունք, առանց քննութեան: Զինուորագրութեան մէջ—երկրորդ կարգի արտօնութիւններ:

Ուսումնարանը կը բացվի 1902 թւի սեպտեմբերի 17-ին: Ուսման սկիզբը՝ սեպտեմբերի 18-ին: Ուսումնարանի ընկալարանը—Նիկոյանիսկայա հրապարակ, № 23, տուն Զաւրիեի:

Նմանքները.—մտորկական, կոչման եւ ծաղիկ պատուաստման վկայականների հետ միասին ընդունվում են Թիֆլիսի առեւտրական ուսումնարանում ամենայն օր մինչև օգոստոսի 21-ը:

Ուսումնարանը ժամանակաւորապէս կառավարում է Թիֆլիսի առեւտրական դպրոցի դիւնկտորը:

3—7

ԳՈՒՏՏԵՆԻՔԵՐԻ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

- վաճառվում են
«Արմէնիա», Լինչի (պատկերազարդ, անգլիերէն լեզուով)—25 ր.
«Գիրք թղթի», Մատենադրութիւն նախնաւոր—1 ր. 50 կ.
«Կորիւն վարդապետ եւ նորին թարգմանութիւնը», գրեց Ն. Բիւզանդացի—1 ր. 50 կ.
«Երգեցողութիւն արքայ պատարագի Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ, փոխադրեալ եւ ներդաշնակեալ յերիս եւ չորիս ձայն», ի ձեռն Մ. Նիկայեան—10 ր.
«Բարեկանդ ջրաբաշխ դաւառ», գրեց Ս. Հայկունի—1 ր. 50 կ.
«Հոլութիւն եւ Սամել Հովիկ» (հայ հովիւն ու հովուհին) Ս. Հայկունի—10 կ.
«Բարակ աշխարհ եւ անուշ շահ» » » 10 կ.
«Մեղս», ժողովրդական վէպ » » 25 կ.
«Թագաւոր Լուսիկ եւ Սեւին Հովիկ» » » 25 կ.
«Աշոտ երկաթ», «Հիւսիսի արծիւ» եւ «Ճանդանքի բովից»—Այվազեանի—2 ր. 30 կ.
«Գրպանի առաւ», Էֆրիկեանի, կազմված—1 ր. 75 կ.
«Արձակ բանաստեղծութիւններ», թարգմանութիւն Ա. Մատուրեանի—50 կ.
«Ոյժեր» (բնական ոյժերի դադունքը) Զիլ. եւ Ուսյա—10 կ.
«Երկրագործական անհրաժեշտ գիտելիքներ», Գ. Ղազարեանի, կազմված—90 կ.
«Աղատութեան մասին», Միլլի, թարգմանութիւն Ա. Կ.—1 ր. 20 կ.
«Հեղինէ», վէպ երկու մասից, տիկ. Մ. Նախիսեանի—1 ր. 75 կ.
«Պատկերներ», Ա. Անարդեանի, կազմված—1 ր. 40 կ.
«Որբունի», պատկերազարդ թերթ (որբերի օգտին)—1 ր. 20 կ.
«Զէյթունի անցեալն ու ներկան» (Զէյթունի եւ Կիրիկիայի բարոյեղով)—1 ր. 50 կ.
«Բնութի Հայկազուն», պատկերազարդ, Կ. Թորոսեանի—2 ր. 50 կ.
«Հիպոտիկ», Հ. Ասրիեանի—50 կ.
«Մագնիտիզմ», թարգմանութիւն Փարմազի—15 կ.
«Նամակներ առ Սանդրո եւ բարեւ մնաք իմ յոյսեր», Պ. Աղամեանի—20 կ.
«Դ. Կ. Թուրեան» (կենսագրութիւն) պատկերով, Վրոյրի 20 կ.
«Բերթուածը եւ թարգմանութիւնը», Պ. Աղամեանի—1 ր. 25 կ.
«Ժողովրդական վէպ եւ հէքեր», Նմենեան ազգագրական ժողովածու, գրեց Ս. Հայկունի—1 ր. 25 կ.

Դիմել՝ Тифлис. Книжный магазинъ «ГУТЕНБЕРГЪ». Г. Галустяну Лорис-Меликовская ул. № 11.

3—3

„Փ. Ն. Փ Ր Ի Դ Օ Ն Ե Ա Ն“

ԿՕՆՖԵՏԻ ԵՒ ԾՕԿՕԼԱԴԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Կովկասեան գիւղատնտեսական ցուցահանդէսում մեր պատրաստած ապրանքները ալ անցանք
Կովկասում կոնֆէտի արդիւնաբերութեան

ՄԻԱԿ ՄԵԾ ԱՐԾԱԹԵԱՅ ՄԵԴԱԼԻ

Առանձնապէս յանձնարարում ենք. ՌԱՀԱԹ-ԼՈՒՈՒՍԻ, Կարամէլ ժիւրիէՆՅԱՅԱՅԱՅ եւ առհասարակ բարձր յատկութեան կարամէլներ մրցեցնելով:
Դործարանում աշխատում են մայրաքաղաքի նշանաւոր վարպետները:
Պատուէրներով դիմել. Թիֆլիս, Պավլովսկայա փողոց, սեփական տուն
Դործարանի հեռախօս № 362, գործարանական խանութիւնը № 772:

37—100 (հ. 4.)